«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների, ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ Սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Հարությունյան Լուսինե
Մանկապարտեզ՝ «ԼՈՒՍԱՍՏՂԻԿ» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն——————————————————————————————————————— 3

Գլուխ 1. Ընտանիքի և մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում, մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում ——————————————————————————————— 6

1.2 Ինչ են շահում դաստիարակները ու մանկապարտեզը, ինչ է շահում ընտանիքը ---------- 9

1.3 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին, տնային այցեր ——————————— 11

1.4 Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ ——————————————— 13

Գլուխ 2. Ընտանիք մանկապարտեզ համագործակցությունը

2.1 Ընտանիք մանկապարտեզ համագործակցության արդյունավետությունը ——————— 16

2.2Սեմինար – պարապմունք.«Երջանիկ երեխա երջանիկ ընտանիք» ——————————— 17

Եզրակացություն ——————————————————————————————— 20

Գրականության ցանկ ——————————————————————————————— 22

Ներածություն

Լավ մանկապարտեզը
ոչ թե փոխարինում, այլ
լրացնում է ընտանեկան
դաստիարակությունը
Բենջամին Սփոք

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը:

Ժամանակակից աշխարհում ընտանիքը և նրա սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարվում են ամուր պետության և առողջ հասարակության գրավականներ, և դրանով պայմանավորված՝ այսօր գիտական հանրության շրջանում մեծ արդիականություն են վայելում ծնողների մանկավարժական իրազեկման հետ կապված տարատեսկա հիմնահարցերը: Ծնողական կրթության գործընթացում առանցքային կարևորություն ունի երեխան, նրա անձի զարգացումն ու փոխհարաբերություններն իրեն շրջապատող միջավայրի հետ:

Շատ ծնողներ անվստահություն են ցուցաբերում երեխայի դաստիարակության ընթացքում՝ վախենալով սխալ դաստիարակել իրենց երեխային, ինչն էլ հանգեցնում է մի շարք բացթողումների: Իսկ երեխան, զգալով ծնողի անվստահությունը, սկսում է մանիպուլյացիայի ենթարկել սեփական ծնողին, որն էլ հիմք է ծառայում բացասական վարքագծի ձևավորմանը: Ըստ Ա.Մակարենկոյի՝ յուրաքանչյուր ընտանիք հատկանշվում է կյանքի ու կենսապայմանների յուրակերպությամբ և պետք է ինքնուրույնաբար մանկավարժական շատ խնդիրներ լուծի, սակայն մարդը կյանքի բոլոր փուլերում էլ սովորելու և խորհրդակցության կարիք ունի, հատկապես՝ մեկ այլ մարդու դաստիրակության գործընթացում (Մակարենկո 1953:398) Այս առումով կարևվորվում է նաև խորհրդատվության դերը երեխայի և ընտանիքի հետ տարվող աշխատանքներում: Ընտանիքներին ցուցաբերվող աջակցության մեջ կարևոր է ծնողների և մանկավարժների գործողությունների համաձայնեցմածությունը:

Պ.Ֆ. Կապտերևը լիովին համոզված էր, որ ընտանիքն ազդում է երեխայի վրա իր մթնոլորտով, անդամներով, մշակութային և գիտական զարգացվածությամբ, միասնականությամբ, բարոյական և ինտելեկտուալ համոզմունքներով:

Ըստ նրա՝ ինչպես ցանկացած գործընթացում, երեխայի դաստիրակության ժամանակ էլ հնարավոր են սխալներ, սակայն ծնողների գերխնդիրն է ստեղծել երեխայի համար այնպիսի պայմաններ, որոնք կկանխեն երեխայի՝ ծնողների կողմից չսիրված և անտեսված լինելու զգացումը: Այսինքն՝ երեխան պետք է վստահ լինի, որ իրեն սիրում են (Շուբով 2004:205): Երեխաների հետ աշխատելիս անչափ կարևոր է ծնողների հետ կապը: Մանկապարտեզ – ընտանիք համագործակցությունը կազմում է երեխայի զարգացման կարևոր մաս, քանի որ այդ կապը նպաստում է երեխայի ճիշտ զարգացմանը: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիրակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացմանը: Համագործակցության արդյունքում թե' ծնողը և թե' դաստիարակը արժեքավոր տեղեկություններն են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Նա է իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում:

Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին ինքնուրույն հասնել հաջողությունների:

Աշխատանքի նպատակը: Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդելների ուսումնասիրությունն ու ներկայացումն է:

Թեմայի արդիականությունը: Այսօր թե' մանկապարտեզը և թե ծնողական համայնքը ավելի մեծ հնարավորություններ ունեն հաղորդակցման և գործընկերության հարթակներ ստեղծելու համար: Եվ այդ համագործակցության արդյունավետությունով է պայմնավորված նոր սերնդի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները:Աշխատանքի նպատակն է ներկայացնել ընտանիքի և մանկապարտեզի դերը և նշանակությունը երեխայի ներդաշնակ զարգացման գործում, ինչպես նաև ուսումնասիրել և ներկայացնել ընտանիք – մանկապարտեզ համագործակցության մոդելներ:

Վարկած: Ենթադրում ենք, որ մանկապարտեզի և ընտանիքի միջև փոխազդեցությունը բնութագրվում է մանկապարտեզի կյանքին ակտիվորեն մասնակցելը ծնողների ցածր պատրաստակամությամբ:

Ակնկալվող արդյունքներ՝

-ծնողների, դաստիարակների և սաների իրավական մշակույթի մակարդակի բարձրացում;

-բարոյական վարքի հմտությունների ձևավորում;

-նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական կարողությունների բարձրացում;

-ծնողների ներգրավումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում:

Գլուխ 1

1.1Ընտանիքի եվ մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը:

Ս.Իգնել

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխան, ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր վայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Դաստիարակի աշխատանքի արդյունավետությունը կախված է ծնողների փոխհարաբերությունից, ընտանիքի կյանքի ձևից: Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար:

Յուրաքանչյուչ երեխա իր ընտանիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա ողջ կյանքի համար. Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի, թույլերի նկատմամբ խղճահարության ու օգնելու հիմքերը:

Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորությունները՝ Նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում են դաստիարակում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը:

Մակարենկոն իր ողջ պրակտիկ աշխատանքի ընթացքում ապացուցել է, որ միայն ընտանիքում երեխան կարող է ստանալ այնպիսի որակներ, ինչպիսին են հարգել ընկերոջ կարծիքը, նպատակաուղղվածություն, կամք, ազնվություն, Մարդասիրական զգացմունքներ և այլն:

Ընտանիքի անդամները պետք է.

1.Ժամանակ հատկացնեն իրենց երեխային իսկապես ուշադիր նայելու համար: Նկատեն հիվանդությունը, էմոցիոնալ հուզումնական դաշտը, քաշի ավելացումը կամ կորուստը, խնամքի պակասը:

2.Ավելի շատ ժամանակ անցկացնեն՝ լսելով երեխաներին: Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում, մինչև այն, թե որքանով է նրան դուր գալիս իրենց պատրաստածը:

3. Ծիծաղն միասին: Պիտի թողնել, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել զվարճանալ իր ձևով:

4.Աշխատել աշխարհին նաել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ձյունով կամ աշնանային տերևների մեջ թավալ գալով:

5.Պիտի հրաժարվել երեկոյան կարևոր ժամերը նվիրել արտաժամյա աշխատանքին:

6.Օրը ճիշտ սկսել, լավ նախաճաշել, չմոռանալ հրաժեշտ տալ:

7.Համբուրել երեխային, գրկել նրան, սեղմել ձեռքը և ասել, որ սիրում եք նրան:

Մարդկային շփման առաջին փորձերը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակություն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է նախակրթարանը, մանկապարտեզը: Մանկապարտեզի առօրյան ի տարբերություն ընտանեկան միջավայրի հնարավորություն է տալիս երեխային շփվել հասակակիցների հետ, դառնալ ավելի ինքնուրույն:

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է անհատական զարգացման տեմպով և իր ուրույն ոճով: Երեխաների անհատական առանձնահատկությունները պետք է հաշվառվեն նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս: Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը, մտածողությունը: Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով:

Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիք է՝ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում:

Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում՝ երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Մանկապարտեզը, պետք է ստեղծի միջավայր, որը պետք է նպաստի երեխայի զարգացմանը, դաստիարակմանը, պետք է ստանձնի խաղընկերոջ դերը:

Երեխայի էմոցիոնալ դաշտում, տեղի են ունենում փոփոխություններ: Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտերի հերոսներին, ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերները իրական են: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք նա փորձում է ճշտությամբ կատարել: Օրինակ՝ հարդարել անկողինը, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը, ինքնուրույն հագնվել

և այլն: Նման պարզ խնդիրները երեխայի մոտ զարգացնում են պատասխանատվությունը և ինքնուրույնությունը:

Մանկապարտեզ հաճախելն ունի մի շարք դրական ազդեցություններ երեխաների հոգեբանական զարգացման վրա ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողութնյան տակ մնալուն՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

— սոցիալական հմտությունները՝ նրանք սովորում են ուրիշ անհատների հետ հաղորդակցվելու հմտություններ (ինչն էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների, դայակի հետ հարաբերություններից),
— թիմում աշխատելու հմտությունները,
— խոսքային հմտությունները
— հուզական աշխարհը, նրանք ավելի լավ են հասկանում իրենք իրենց և դիմացինի զգացմունքներն ու հույզերը:

Ինչպես նաև երեխան՝

— սովորում է հարգել դիմացինին,
— ձեռք է բերում նոր ընկերներ
— ծանոթանում է նոր մոտեցումների և գաղափարների հետ,
— լայնացնում է աշխարհայացքը:

Մանկապարտեզը հսկում է երեխայի հստակ սահմանված օրվա ռեժիմը: Երեխայի հետ աշխատում է մասնագիտացված անձնակազմ: Մանկապարտեզից հետո երեխան ավելի արագ է հարմարվում դպրոցին: Այստեղ կարևորը ձեռք բերված կյանքի մի շարք հմտություններն են:

Մանկապարտեզ հաճախելու ցանկալի տարիքը երեք տարեկանն է, չնայած երեխա կա, որ մանկապարտեզ է հաճախում երկու տարեկանից:

Մանկապարտեզի կյանքում ծնողներին ներգրավելու համար դաստիարակը պետք է նախաձեռնող լինի և ուղիներ փնտրի երեխայի միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղոդակցվելու համար: Տնօրինությունն ու դաստիարակը պետք է մշակեն հստակ նախագծեր ընտանիքի հետ աշխատելու համար:

1.2 Ինչ են շահում դաստիարակները ու պարտեզը, ինչ է շահում ընտանիքը

Ընտանիքի ներգրավումով նախակրթարանի կյանքին և նրանց ճիշտ համագործակցությունով է պայմանավորված երեխայի անթերի զարգացումը: Այդ համագործակցությունից շահում է, թե' երեխան, թե' ընտանիքը, թե' մանկապարտեզը:

Ծնողները համարվում են երեխայի համար առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը: Այն մարդիկ, ովքեր անմիջապես շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին, փոքրիկի հետ աշխատող մանկավարժը պարտավոր է ուսումնասիրել նրանց ընտանիքը:

Ընտանիքները տարբեր են իրենց բնույթով կազմով և գործունեությամբ: Դաստիարակը պետք է տա ընտանիքին տարբեր գաղափարներ և տեղեկություններ, որոնք կօգնեն երեխայի հետ հետագա շփմանը: Նա պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծարար, բարեհամբույր, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը: Ծնողները կարող են ներգրավվել տարնբեր նպատակներով: Օրինակ՝ Նյութական միջավայրի բարելավմանը, խոհանոցային աշխատանքում, միջոցառումների ու էքսկուրսիաների ժամանակ: Շփմանը նպաստում է նաև ծնողական հավաքները սեմինարները:

Ընտանիք – մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Երեխան ամեն ինչ առաջինը սովորում է և փորձում է հենց ընտանիքում սկսած կերակրվելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, կրթում և դաստիարակում:

Երեխան իր վրա կրում է ընտանիքի ազդեցությունը և դաստիարակը պետք է լրջորեն հաշվի առնի անձի այդ փաստը: Երեխայի հետ աշխատելիս ամրապնդի կապը ընտանիքի հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկությունները և տարբերությունը:

Երբ ընտանիքի անդամը դրական մասնակցություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Դա երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս մանկապարտեզին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Երեխայի մասին տեղեկության փոխանակումից շահում են թե ծնողը, թե՝ մանկավարժը:

Ծնողները կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նածաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվությունը: Սա օգնում է ծնողներին լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ճիշտ դաստիարակել երեխային տանը: Որոշ դեպքերում առկա է լինում դաստիարակ – ծնող փոխհարաբերության աններդաշնակություն, որը ծնողին հետ է պահում երեխայի ուսուցման գործին ակտիվ մասնակցությունից: Ծնողներին պարապունքների և կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել: Ժողովներն ու հանդիպումները անցկացնել ծնողներին հարմար ժամերին, օրերին: Թույլ տալ, որ ընտանիքն ինքն որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը: Պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ:

Որոնել տարբերակներ հայրերին, եղբայրներին, քույրերին մանկապարտեզի կյանքին ներգրավելու համար: Հենվել երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն, լինել համբերատար, պահպանել գաղտնիություն:

Ընտանիքին մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար կարելի է կրառել բազում մեթոդներ, որոնք կօգնեն երեխային ինքուրույն հասնել հաջողության:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ, տեղեկություն են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները,
- Ծնողական ժողովներ,
- Ծնողական համաժողովներ, որի նպատակը դաստիրակության փորձի փոխանակումն է,
- Առավոտյան հանդիպումներ,
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին, երբ դաստիարակը ներկայացնում է այն գործողությունը որը կատարվել է երեխայի հետ աշխատելիս,
- Վստահության հեռախոս,
- Կլոր սեղան,
- Զրույցներ՝ անհատական և խմբային,
- Խորհրդատվություններ,
- Երեխաների ընդհանուր զննումներ,
- Սպորտային միջոցառումներ:

1.3 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին, տնային այցեր

Մանկավարժների և ընտանիքների միջև դրական հաղորդակցությունը դրական մթնոլորտ է ստեղծում երեխաների համար: Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են: երեխաները շատ բան են սովորում հենվ ընտանիքից սկսած բաժակով ջուր խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: նրանք շատ լավ են ճանաչում իրենց երեխաներին և գործուն դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը, ուստի դաստիարակները պետք է լրջորեն հաշվի առնեն այդ փաստը և երեխաների հետ աշխատելիս ամրապնդեն կապը ընտանիքի հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկությունները և տարբերությունները: Որքան սերտ և արդյունավետ լինի մանկապարտեզ – ընտանիք կապը, այնքան ավելի մեծ կշահեն երեխաները: Արդյունավետ համագործակցության դեպքում ընտանիքը, մասնավորապես՝ ծնողներն մասնակցում են երեխայի մանկապարտեզային կյանքին: Դրա համար անհրաժեշտ է մանկապարտեզի և ընտանիքի՝ համապատասխանաբար տնօրինության, դաստիարակների և ծնողների փոխադարց համձայնությունը, որից մեծապես շահում են թե' երեխան, թե' ընտանիքը և թե' մանկապարտեզը: Լինում են դեպքեր, երբ շահում է նաև համայնքը: Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուն ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Տնօրենությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ: կարելի է բազմազան ռազմավարություններ մշակել՝ յուրաքանչյուր ընտանիքի նկատմամբ անհատական մոտեցում կրառելու և ընտանիքների մեծամասնությանը ներգրավելու համար:

Այցերն ընտանիքներ կարևոր տեղեկություն կարող է տալ երեխայի մասին և ամրապնդել փոխհաղորդակցումը: Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության մասին: Աստեղ է, որ դաստիարակը նկատում է, թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մեթոդները: Տնային այցերը մասնագետին երեխայի և ծնողների կյանքի պայանների մասին լրացուցիչ տեղեկություն է տալիս: Մանկավարժին թույլ է տալիս իրագործել այն սկբունքը, ըստ որի՝ կրթական ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է երեխան: Այցերի ծրագրերը խիստ բազմազան են:

Կրևոր է թե այցի նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե ընտանի՞քը: Այցի ժամանակ կարելի է տունը նմանեցնել խմբասենյակին և կիրառել երեխայակենտրոն մոտեցում: Պետք չէ ակնկալել, որ տնային այցերը կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ: Դաստիարակը պետք է ունենա լավ տրամադրություն, մոռանա բողոքների մասին, թույլ չտալ դիտողություններ և քննադատություններ, խորհուրդներ տալ զգուշավորությամբ: Բանավոր խոսքը նույնապես մեծ դեր ունի երեխայի համակողմանի զարգացման մեջ: Մանկավարժը երեխայի հետ շփվելիս պետք է խոսի հստակ և հատ հատ: Արագախոսությունը երեխայի մոտ հետագայում առաջացնում է թոթովախոսություն:

1.4Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ:

Ծնողների հետ աշխատանք տանելու ժամանակ անհրաժեշտ է ստեղծագործական և ճկուն մոտեցում: Օգտագործել բազմատեսակ ձևեր, որոնցից է ժողովների անցկացումը ծնողներին հարմար ժամերին: Թույլ տալ ծնողներին, որ իրենք որոշեն ընդհանուր գործին իրենց մասնակցության լավագույն ձևը: Հետևել, որ մյուս մանկավարժները՝ երաժշտության, լոգոպեդը, գոնե շաբաթը մեկ անգամ հանդիպեն ծնողներին: Փորձեր են կատարում ներգրավել ոչ միայն ծնողներին, այլև ընտանիքի մյուս անդամներին: Հենվել ընտանիքի ուժեղ կողմերի վրա՝ քիչ–քիչ ստվերում թողնելով թույլ կողմերը: Համերաշխությունը կարևոր գործոն է աշխատանքի ժամանակ, քանի որ ջանքեր են պահանջում: Ամենակարևոր պայմանը գաղտնիության պահպանումն է յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատելիս:

Ժողեվները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծածել սովորական աշխատանքային ժամերին: Ժողովներ վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը մանկավարժի «տարածքն» է: Շփման ժամանակ օգտագործվում է ոչ նեղ մասնագիտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխային: Ծնողների գնալուց հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները և քննարկված հարցերը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր և խմբային:

- **Ընդհանուր ժողովները** կազմակերպվում են տարին երկու – երեք անգամ: Դրանք իրականացվում են հիմնականում մանկավարժական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ: Քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա և աշխատանքների ամփոփման հետ կապված: Այս դեպքում մանկավարժը պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ: Պետք է օգտագործել հաղորդակցման նորաձև և մտերմիկ ոճեր: Ընդհանուր ժողովներին կարելի է հրավիրել բժշկի, հոգեբանի, արվեստագետի նման կարգի այլ մասնագետների:

- **Խմբային ժողովները** անցկացվում են 2-3 ամիսը մեկ անգամ:

  Դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Խոսքով կարող են հանդես գալ ծնողներ և այլ մասնագետներ:

Գոյություն ունեն նաև ծնողական համաժողովներ, որոնց հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակման փորձի փոխանակումը: Ժողովի ժամանակ ելույթ են ունենում տարբեր մասնագետներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ՝ երեխաների կամ մանկավարժների ձեռքի աշխատանքներից: Հմաժողովի վերջում մասնակիցները հրավիրվում են «կլոր սեղանի» շուրջ: Որոշվում են ապագա մրցույթների ծրագրերի, օրերն ու ժամերը: Դաստիարակը պետք է իմանա մասնակիցների անունները, չի կարելի ձգձգել միջոցառումը: Որոշ ծնողների խոսքից հետո դաստիարակը պետք է ընդհանրացնի իր ասելիքը՝ համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի իրադարձություններով: Առաջարկությունների արկղիկը, որը հիմնականում ամրացվում է մանկապարտեզի միջանցքների պատերին, հիմք է հանդիսանում դրան, որ ծնողները արտահայտեն իրենց մտահոգությունները երեխաների հետ կապված այս կամ այն հարցի շուրջ:

Ծնողը պարտավոր չէ իր թերթի վրա նշել իր կամ երեխայի անունը: Արկղիկը բացվում է ժողովների ժամանակ և քննարկվում է դրա մեջ հավաքված հարցերը, լինում են նաև բարեմաղթանքներ, որոնք մանկավարժը ընթերցում է ժողովի ընթացքում: Գործում է նաև «Վստահությանն հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»: Սրանք ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում ծնողների հետ: Կարելի է անցկացնել մրցույթ «Ամենա համերաշխ ընտանիք» վերնագրով, որտեղ ընտրվում են ամենա ակտիվ ծնողներն ու երեխաները: Ասյ մրցույթներն ավելի են մտերմացնում թե ընտանիքի անդամներին, և թե ընտանիք – մանկապարտեզ հարաբերությունները: Ամեն նոր հավաքույթի ժամանակ կազմակերպվում են նոր մրցույթներ, որտեղ ներգրավվում են նաև ընտանիքի տարբեր անդամները:

Պատի տեղեկատվական թերթերը օգնում են ընտանիքին միշտ թարմ տեղեկություն հաղորդելու համար: Դրանց միջոցով ազդարարվում են ժողովները, ամենօրյան դասացուցակը, ուսումնական հաստատության անցուդարձը:

- Ձեր երեխան դաստիարակեցեք՝ ցույց տալով անոր ձեր սեփական անթերի օրինակը: Երեխան կուզե տեսնել ձեր արարքները, այ ոչ թե լսել ձեր խոսքերը:

- Ջանացեք երեխայի աչքերուն մնալ ձեր բարձունքին վրա: Ան թող չտեսնե ձեր թերություններն ու թուլությունները:
- ՈՒշադիր եղեք ձեր գործած բառերում, երբ երեխային հետ կխոսիք:
- Երեխան փոքր և անզոր էակ մը ըլալով՝ կուզե իր կողքին ունենալ պաշտպանող «անվիճելի հեղինակություն»: Երեխան միշտ ծնողե կսպասե ֆիզիկական ու հոգեբանական պաշտպանություն:
- Եթե դուք ստիպված եք պատժելու երեխային, ձեր դեմքի վրա ո՛չ զայրույթի, ո՛չ ալ ատելության արտահայտություն թող ըլա: Եչեխան արագ կմոռնայ ապտակը կամ պատիժը, բայց երբեք չի մոռանար ձեր հայացքը լեցուն զայրույթվ և ատելությամբ:
- Երեխան պետք է անսահմանորեն վստահի և ենթարկվի իր ծնողքին: Համերաշխ ընտանիքներու մեջ ասիկա երեխայի դաստիրակման հիմնական կանոնն է:

Մայր Թերեզա

Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

Ժան Ժակ Ռուսո

Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների:

Օնորե դ Բալզակ

Գլուխ 2. Ծնող – մանկապարտեզ համագործակցություն

2.1 Ծնող – մանկապարտեզ համագործակցություն

Առավել արդյունավետ աշխատանքի համար ժամանակակից մանկապարտեզների և ընտանիքի փոխհարաբերության հիմքում պետք է դրվի համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ ի շահ երեխայի զարգացմանը: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը լինի բաց համակարգ ծնողների և ընտանիքի մյուս անդամների համար: Ընտանիքի և մանկապարտեզի գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:

Ինչո՞ւ է անհրաժետ խթանել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը: Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին հասկանալ մանկապարտեզի ծրագրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները:

Մանկապարտեզի կյանքում ընտանիքի ներգրավումը իրականացվում է բազմաթիվ և բազմաբնույթ նախագծերի միջոցով:

2.2 Սեմինար «Երջանիկ երեխա երջանիկ ընտանիք»

Ծնողների մանկավարժական գիտելիքները բարձրացնելու նպատակով կազմակերպվում են տարբեր սեմինար – պարապմունքներ ներկայացվում է սեմինար – պարապմունքի օրինակ՝

Թեմա՝ Երջանիկ երեխա երջանիկ ընտանիք

Նպատակը՝ մանկապարտեզում սաների ընտանիքների հետ պատասխանատու և փոխկապակցված հարաբերությունների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, ծնողների իրավասությունների բարձրացում, ընտանիքների ներգրավում դաստիարակների հետ համատեղ աշխատանքներին մասնակցելու համար բարև ձեզ սիրելի ծնողներ: Այսօր մենք հավաքվել ենք մեր ծնողական ակումբի հանդիպմանը: Իսկ մեր հանդիպումը նվիրված է ընտանիքին: Կարծում եմ, բոլորս էլ համաձայն ենք «Երջանիկ երեխա՝ երջանիկ ընտանիքում» վերնագրի հետ: Մենք նաև մեծ և ընկերասեր ընտանիք ենք: Որպեսզի մեր հանդիպումը անցնի ընկերության, փոխըմբռնման, միմյանց նկատմամբ հարգանքի մթնոլորտում, առաջարկում եմ մի փոքր խաղալ՝

Հոգեբանական վարժություն

«Թել միացնող» (գնդակով, ներկայացնելով ինքներդ ձեզ և ձեր ընտանիքին):

Ծնողները, բացելով խճճվածությունը, հակիրճ խոսում են իրենց ընտանիքի, սովորությունների ու ավանդույթների մասին:

Դաստիարակի ելույթը՝

«Ժամանակակից ընտանիքի արժեքները երեխայի անձի համար»

Շատ փիլիսոփաներ կարծում են, որ երեխայի հայտնվելը ընտանիքում խթան է տալիս ծնողների՝ որպես անհատների հետագա զարգացմանը: Կրթության գործընթացում ծնողներն անցնում են իրենց վրա ներքին աշխատանքի գործընթաց: Մենք ոչ միայն կերտում ենք մարդու ապագան, այլ մենք ինքներս ենք փոխվում և կատարելագործվում: Մեզանից յուրաքանչյուրը հանդիպել է այն մտքին, որ ժամանակակից ընտանիքում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

Հաղորդակցության բացակայություն, ընտիքի առանձին անդամների հոգեբանական տրավմա, ինչպես նաև նրանց վաքագիծը, ընտանեկան հարաբերությունների զարգացման դինամիկայի մասին իմացության բացակայությունը, սոցիալ – տնտեսական գործոնները, որոնք բացասաբար են ազդում ընտանիքի ձևավորման և զանգացման վրա, որպես ամբողջություն, երեխաների դաստիարակության հարցում սխալ մոտեցումներ: Բացասական գործոնների ազդեցության տակ ընտանիքում տեղի է ունենում սոցիալական կապերի ներքին քայքայում:

Ապագա սերնդին կրթելիս անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել նյութական ոլորտի և հոգեհուզականի միջև:

Կարևոր է նաև երեխաների հետ՝ ընկերական հարաբերությունների պահպանումը. Ծնողները պետք է ավելի շատ շբվեն իրենց երեխաների հետ, որպեսզի ժամանակին հետևեն և շտկեն երեխայի վերաբերմունքը մոտիվացիայի նկատմամբ:

Յուրաքանչյուր գիտակից ծնող պետք է վերլուծի իր դաստիարակության ոճը, գտնի նրա թույլ կողմերը, ձևավորի վստահելի և ճշմարտացի հարաբերություններ: Բացի գովեստից, պատիժը պետք է լինի նաև կրթության մեջ: Բայց օգտագործելով այն դուք պետք է պահպանեք որոշակի կանոններ: Երեխային պատժելիս մի վնասեք նրա առողջությունը՝ ոչ ֆիզիկական, ոչ հոգեկան: Դեռ չընձևավորված անհատականությունը հեշտությամբ միավորվում է: Անհնար է նաև պատժել կանխարգելման համար: Այս պահվածքը կարող է հանգեցնել անվստահության: Երեխան պետք է իմանա, որ իրեն կարելի է պատժել միայն արդար:

Եթե սերը բավարար չափով չցուցաբերվի, ապա երեխան կարող է սկսել պատիժ փնտրել՝ որպես գոնե ջերմ զգացմունքներ ստանալու միակ հնարավորությունը: Ստիպելով նրանց աշխատել, դրանով իսկ պատժելով երեխաներին, դուք զզվանք եք ձևավորում աշխատանքի նկատմամբ, իսկ եթե դա անում եք շատ հաճախ, ապա կյանքը ինքնին դառնում է անտանելի երեխայի համար: Սիրեք ձեր երեխաներին, արդար եղեք նրանց նկատմամբ, փորձեք հասկանալ նրանց: Շփվեք նրանց հետ՝ բացատրելով նրանց ձեր և նրանց գործողությունները:

Հարցաթերթ ծնողների համար

«Ընտանիքում հարաբերությունների սահմանափակումը»

ա)Ի՞նչ եք կարծում, ձեր ընտանիքում կա փոխըմբռնում երեխաների հետ:

բ)Ձեր երեխաները սրտանց խոսում են ձեզ հետ:

գ)Ձեր երեխաների հետ ընդհանուր հոբբիներ, գործունեություն, հետաքրքրություններ ունեք: Մասնակցում եք առշավների, զբոսանքի ձեր երեխաների հետ:

դ) Ինչպես ե՞ք աջակցում ձեր երեխաների լավ ձգտումներին:

ե)Ընտանեկան ո՞ր ավանդույթներնեն օգնում ամրապնդել ձեր ընտանիքը:

Սեմինարն ավարտվեց ծնողների կողմից ստեղծագործական աշխատանք կատարելով՝ «Քնքուշ երիցուկներ»

Ծնողները գունագեղ զարդարում են «մարգարիտկաներ» մեջտեղում երեխայի լուսանկարն է, իսկ թերթիկների վրա գրված են երեխայի անվան սիրալիր ածանցյալներ:

Հետագայում այս երիցուկները կտեղադրվեն ծնողական անկյունում:

Ամփոփելով՝

Շնորհակալություն այսօր մեզ այցելելու համար: Մաղթում եմ, որ ձեր ընտնիքներում միշտ լինի խաղաղություն, խողրմբռնում, որպեսզի դուք միշտ հասկանաք ձեր երեխաներին, իսկ երբ նրանք մեծանան, նրանք հոգ տանեն ձեր մասին:

Սեմինարին ներկա էին՝

Տնօրեն՝ Լ.Ավետիսյանը

Մեթոդիստ՝ Ս.Ձվակերյանը

Նրանք եկան հետևյալ եզրահանգման՝ նման սեմինարները օգնում են ծնողին՝

- Հասկանալ նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության տարբեր ասպեկտները
- Կանխել երեխայի նկատմամբ ոչ պատշաճ գործողությունները
- Ներգրավել ընտանիքը համագործակցության մեջ՝ կրթական և այլ բնույթի խնդիրների համատեղ լուծման համար
- Նպատել ծնողական թիմի մերձեցմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հանգում են այն եզրակացության, որ կրթելու և դաստիարակելու հիմքը դրվում է ընտանիքում: Մանկապարտեզը լրացնում է, օգնում ծնողի սկսած աշխատանքը ճիշտ նպատակին հասցնելուն:

Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, և հարաբերությունը պետք է լինի բարեկամական – գործընկերային:

- Երեխայի դաստիրակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր երեխայի զարգացման համար:
- Ընտանիք – մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ – ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համտեղ աշխատանքը, որնել երկուստեք հաճելի է:
- Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ – ընտանիք կապը:
- Ընտանիք – մանկապարտեզ արդյունավեր համագործակցությունը մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրանից շահում են թե ընտանիքտ, թե պարտեզը, իսկ որ ամենա կարևորն է, արդյունքում մեծապես շահում է ինքը երեխան:

1. Ընտանիքը պետք է դառնա մանկապարտեզի գործընկերը,
2. Ընտանիքը որպես փորձագետ պետք է օգնի մանկապարտեզին զարգացնել և կատարելագործել ծրագիրը,
3. Ընտանիքը պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները,
4. Մանկապարտեզը ծնողին պետք է դիտարկի որպես գործընկեր, պատվիրատու, լսի ծնողի անհանգստությունը, կարևորի նրա դիտարկումները, տարբեր մասնագիտություններ ունեցող ծնողներին դիտարկի որպես մասնագետներ
5. Ծնողների կարողությունը դիտարկի որպես ռեսուրս և օգտագործի ի նպաստ մանկապարտեզի,

6. Ծնողներին պետք է ներգրավի մանկապարտեզի ամենօրյա կյանքին ներառելով նրանց տարբեր աշխատանքներում:

Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, ապա դա ավելի է մտերմացնում մանկապարտեզի և ընտանիքի կապը: Միջոցառումները տալիս են հետևյալ արդյունքները.

- Ծնողների ոգևորվածություն,
- Համախմբվածություն,
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի մեջ,
- Ծնողների վստահության բարձրացում,
- Երեխաների լավ վարք:

Այն պարտեզներում, որտեղ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը կարևորվում է, երեխաները ավելի ազատ են, ինքնավստահ, հանգիստ և երջանիկ: Բոլոր տեսակի գործընկերության հարաբերությունները ընթանում են կողմերի հավասարության, փոխադարձ գոհունակության և հարգանքի վրա: Դա արտացոլվում է երեխայի դեմքին և արարքների մեջ:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.
2. Իգնել Ս., Ջոնս Ժ. «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը».
3. Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն», գիրք 2, երևան 2005թ.
4. Մակարենկո Ա. Ս. «Դաստիրակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.
5. Մարության Ա. Ս., Դալաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.
6. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «ՈՒսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.
7. «Նախաշավիղ» հանդես.
8. Քայլ առ քայլ «Այնքան ծանոց և անծանոց մեր երեխան»
9. Ибука М., После трёх лет уже поздно.
10. Иухомлинский В. А. как воспитать настоящего человека.